Հ Տ Դ 809.198.1

ԲԱՆԱՀՅՈՒՍԱԿԱՆ ՆՄՈՒՇՆԵՐԸ ՍՈՒՐԵՆ ՄՈՒՐԱԴՅԱՆԻ ՄԱՆԿԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Անահիտ Հայրիյան
Մեսրոպ Մաշտոց Համալսարան
Արցախ

Անոտացիա

Սույն հոդվածում ներկայացված է անվանի բանաստեղծ, դրամատուրգ, մանկագիր Սուրեն Մուրադյանի մանկագրության մեջ ընդգրկված ժողովրդական բանահյուսության ժանրերը: Բանահյուսական նմուշների օգնությամբ հեղինակը զարգացնում է ընթերցողների միտքը, իմացությունը, երևակայությունը, տրամաբանությունը: Բանահյուսական ժանրերը նաև դաստիարակիչ և ճանաչողական մեծ արժեք են ներկայացնում, հետաքրքրություն և արագ կողմնորոշվելու հնարավորություն տալիս ընթերցողին: Ս.Մուրադյանի՝ մանկագրություն բերած բանահյուսական ժանրերը արժեքավոր նյութեր են, որոնք օգտակար և ուսանելի են երեխաների և ծնողների համար:

Բանալի բառեր՝ *բանահյուսական ժանր, հանելուկ, հաշվելուկ, Սուրեն Մուրադյան, մանկագիր, դաստիարակիչ արժեք, ճանաչողական դեր, մանուկ, երևակայություն:*

Բանահյուսությունը սնուցող աղբյուր է եղել գրեթե բոլոր գրողների, մասնավորապես մանկագիրների ստեղծագործությունների համար: Սուրեն Մուրադյանն անմասն ու անհաղորդ չէ բանահյուսական ժանրերից: Նրա մանկագրության մեջ հանդիպում ենք զվարթ հումորով գրված հանելուկների, սուտասելուկների, հաշվելուկների, շուտասելուկների, ուրախ թվաբանության և այլ ժողովրդական մանրապատումների, որոնք հասցեագրված են նախադպրոցական տարիքի երեխաներին, ցածր դասարանների աշակերտներին և, անկասկած, ուսանելի և օժանդակ աղբյուր են երեխաների միտքը, ընդունակությունը զարգացնելու, նրանց ուրախ ժամանցը կազմակերպելու համար:

Նրա «100 հանելուկ» գիրքը, որ հեղինակի երկար տարիների ստեղծագործական մտորումների արգասիքն է, նպատակ է հետապնդում հանելուկների օգնությամբ զարգացնել ընթերցողների միտքը, իմացությունը, երևակայությունը: Հանելուկը շատ սիրված ու տարածված էր ժողովրդական խոսքում, որից էլ փոխանցվել է գեղարվեստական գրականություն: Հանելուկների մեջ հաճախ առարկաները նկատի են առնվում ոչ թե իրենց արտաքին նկարագրով, իբրև սոսկ այդպիսիք, այլ իրենց կատարած հիմնական դերով: Իսկ քանի որ հանելուկի առարկաները վերցվում են մարդու շրջապատի իրականությունից, ապա բնական է, որ դրանց մեծ մասը պետք է լինեն աշխատանքային ու կենցաղային զանազան գործիքներ ու իրեր, որոնք իրենց հիմնական գործառույթով առնչվում են մարդու այս կամ այն գործողության հետ.

Ուտում է, ուտում,
Բայց չի կշտանում,
Ոչ մեծանում է,
Ոչ էլ փոքրանում[1; 12]:
Կամ
Անծայր արտ է,

Հասկերը՝ բյուր
Բայց չփորձես
Քաղել իզուր,
Թեկուզ հնձես
Մի ողջ տարի,
Չի վերջանա
Արտը էլի[1;14]:

Վերոբերյալ հանելուկների առարկաները՝ արտը, հասկը և այլն, հնձելու և այլ գործողությունների հիմնական միջոցներ են արտահայտում:

Հանելուկների միջոցով հեղինակը ներկայացնում է նաև հայոց մեծերին, ազգային և արտասահմանյան տասնյակ գրողներին և նրանց գործերը. Մ.Մաշտոցից մինչև Կոմիտաս, Խ.Աբովյան, Հովհ. Թումանյան և զորավար Անդրանիկ, Վրթ.Փափազյան, Մ.Սարյան, Գ.Նժդեհ...

Հանելուկների մի խումբ նվիրված է նշանավոր գրողների գրքերին, որոնք տեղ են գտել դպրոցական և բուհական ծրագրերում.

Ժուկով-ժամանակով կար մի ճոն ժլատ,
Մի գլխաբացի գդակ խոստացավ,
Նրանց տաք վեճից հյուսվեց մի բալլադ,
Իսկ գործող անձինք թշնամի դարձան[2; 141]:

Իհարկե, բոլորը կկռահեն, որ պատասխանը Հովհ. Թումանյանի «Շունն ու կատուն» ստեղծագործությունն է:

«Հանելուկներում շեշտված այլաբանական պատկերը, տվյալ անձին, առարկային, գրքին բնորոշ արտահայտամիջոցը հեշտացնում է լուծումը»,- գրում է Ս.Մուրադյանը [2; 141]:

Հանելուկների շարքում բնորոշ է Գրիմ եղբայրների «Մոխրոտիկը» հանելուկը.

Մի աղջիկ կար անչափ բարի,
Զուգված, կառքով գնաց պարի,
Զախ կոշիկը նա մոռացավ
Ու մեծ բախտի արժանացավ [2; 141]:

Հանելուկները խմբավորվում են ըստ թեմաների, նրանցում կռահվող առարկան մե՛կ կենդանիներ են, մե՛կ թռչուններ, մե՛կ միջատներ, բույսեր, մրգեր կամ տարբեր առարկաներ, որոնց ընթերցողն անպատճառ ծանոթ է:

Ս. Մուրադյանի հանելուկների կռահվելիք հերոսներ են մեղուն, բուն, աքաղաղը, ձին, գայլը և այլն: Խոսելով մեղվի՝ ոսկու բեռ ուսած շնորհակալ աշխատանքից՝ մանկագիրը ընդհանրացնում է.

Պստիկ է, բայց նրա բերքը
Ողջ աշխարհն է ճանաչում,
Ով անբան է, ով անխելք է,
Նրանից է ամաչում [1; 5]:

Բոլոր մանուկները գիտեն՝ «Արջը յոթ երգ գիտի, յոթն էլ տանձի մասին» առածը: Մուրադյան - մանկագիրը հմտորեն խոսուն հանելուկ է հորինել ըստ այդ առածի.

Քսան երգ գիտի,
Քսան էլ հեքիաթ,
Բոլորն էլ տանձի,
Ու մեղրի մասին.

Ինչ կենդանի է,
Ով արդյոք կասի [1; 9]:

Գրքերի մասին շատ հանելուկներ կան արարված, Մուրադյան մանկագիրն էլ չի շրջանցել դրանք, ստեղծել է իրենը.

Ճերմակ դաշտում սև գառներ են արածում
Աչքով հնձես ուժ ու խելք են տարածում,
Քեզ զգում ես զորեղ ինչպես ամրոցում [1; 10]:

Դաստիարակիչ, ճանաչողական արժեք են ներկայացնում նման տիպի հանելուկները՝ մանկանը ուղղորդելով դեպի գրքի զարմանահրաշ աշխարհը:
Հետաքրքիր է ուղտին նվիրված հանելուկը, որը մի հրաշալի դաս-բացատրություն է, և ճանաչողական դաս կարելի է համարել.

Ջուր է խմում կուշտ, մի անգամ
Ու մի ամիս դիմանում,
Փուշ է ուտում, ծամում երկար,
Մեջքին զույգ սար է տանում [1; 11]:

Ընդհանրապես բանահյուսական բոլոր նմուշներն էլ մանկագրության համար արժեքավոր նյութեր են, որոնք հարստացնում են մանկական ընթերցանության էջերը:

Հետաքրքիր, վարժեցնող, մտածելու տեղիք տվող, տրամաբանությունը զարգացնելու և արագ կողմնորոշվելու հնարավորություն են տալիս «Ուրախ թվաբանություն» բաժնում ընդգրկված խաղ-հանելուկները: Դեռևս հին ժամանակներում ժողովուրդը հորինել է խաղեր, որոնք թե՛ ոգևորում, թե՛ ճանաչողական դեր են խաղում: Ելնելով դրանից՝ «Ուրախ թվաբանություն» շարքում Ս. Մուրադյանը տրամաբանական առաջադրանքներ է հորինել՝ երեխային փորձելու, վարժեցնելու, արագ և ճկուն մտածելու համար: Այսպես օրինակ՝

Հավը ունի քսան ճուտ,
Ամեն ճուտը՝ երկու բուդ,
Ամեն ճուտին մի կոտ կուտ,
Քանի կոտ կար, քանի բուդ [1; 15]:

Ս. Մուրադյանի հաշվելուկներում առկա են այնպիսիները, որոնցում ներկայացված երևույթը նաև շահագրգռիչ գործոն է պարունակում:
Օրինակ՝

Ութ աշակերտ դասարանում
Սովորում է գերազանց,
Ինը «չորս» է միշտ ստանում,
Մեկը ծույլ է չափազանց :
Հինգ աղջիկ կա գերազանցիկ,
«Չորս» ստացող հինգ տղա,
Տղաներից մեկը ծույլիկ,
Աղջիկներից ծույլ չկա:
Այս խնդիրը դուք կազմեցեք,
Պատասխաններն ստացեք [1; 16]:

Հաշվելուկը դպրոցահասակ երեխայի մոտ ձևավորում է բարձր գնահատական ստանալու ձգտումը:

Իրենց դաստիարակչական բնույթով լայն տարածում ունեն ժողովրդական բանահյուսության ժանրերից շուտասելուկները, սուտասելուկները, զվարճախոսությունները, որոնք իրենց հակիրճությամբ դյուրընկալելի են, պատկերավոր ու բովանդակալից: Նման բնույթի փոքրածավալ նմուշները ցայտուն են դարձնում արտահայտվող միտքը, ժողովրդական կենսափորձը հաղորդում մանկանը՝ լայն մտահորիզոն բացելով նրա առջև:

Շուտասելուկը՝ նաև շուտասուք, շուտասելիք. Մանկական ժողովրդական բանահյուսության կատակային տեսակ է: Շուտասելուկը լեզվահնչյունական յուրօրինակ խաղ է, վարժություն: Այն նպատակ ունի մանկական լեզուն վարժեցնելու հնչյունական բարդ ու ճիշտ արտասանության:

Այս առումով անչափ հետաքրքիր է նաև Ս.Մուրադյանի ստեղծած շուտասելուկների շարքը : Դրանց լավագույն նմուշներ զետեղված են կրտսեր դպրոցի «Այբբենարան»-ում և «Մայրենի»-ի դասագրքերում: Բերենք նրանցից մի քանիսը.

Սարի ուսին՝ սիրուն լուսին,
Սիրուն լուսին՝ սարի ուսին [1; 20]:

Կամ

Ասատուր, սուր-սուր մասուր տուր,
Սուր-սուր մասուր տուր,Ասատուր [1; 21]:

Շուտասելուկները ունեն յուրօրինակ ռիթմ ու մեղեդայնություն:Մուրադյան մանկագիրը շուտասելուկի միջոցով ևս երեխային շատ դաստիարակիչ և ճանաչողական երևույթներ է հուշում, օրինակ այն, որ ծիծեռնակը գարնան ավետաբերն է.

Ծիծեռնակը գարնանաբեր ծլվլոցով լցրեց բակը,
Ծլվլոցով լցրեց բակը գարնանաբեր ծիծեռնակը [1; 21]:

Մեկ ուրիշ շուտասելուկում մանկագիրը երեխային ճանաչել է տալիս գայլ գազանի վտանգավորությունը գառների հանդեպ.

Մի գայլ գիշերով գոմից գողացավ երկու ամլիկ գառ,
Երկու ամլիկ գառ գիշերով գոմից գողացավ մի գայլ [1; 21]:

Ս. Մուրադյանի «Ժամանցագիրք» փոքրիկ գրքում տեղ են գտել նաև սուտասելուկներ, որոնք զարգացնում են մանկան երևակայությունը.

Քարերի մեջ ցանեցի
Մի քիչ գարի ու կորեկ
Ու աշնանը քաղեցի
Ձմերուկի առատ բերք:
Կատուն սայլին լծեցի
Ու բերքս տուն բերեցի,
Ողջ ձմեռը կուշտ կերանք...
Այ քեզ հրաշք վար ու ցանք [1; 22]:

Ս.Մուրադյանի՝ մանկագրություն բերած բանահյուսական ժանրերը արժեքավոր նյութեր են, որոնք օգտակար և ուսանելի են երեխաների և ծնողների համար:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Մուրադյան Սուրեն, Ժամանցագիրք,Երևան, 2008, <<ՎՄՎ-ՊՐԻՆՏ>>, 25 էջ:
2. Մուրադյան Սուրեն, Ձմեռնամուտի գանձեր, Երևան, 2017, <<ՎՄՎ-ՊՐԻՆՏ>> 235 էջ:

РЕЗЮМЕ

Образцы фольклора в детской литературе Сурена Мурадяна

Анаит Айриян

Ключевые слова: Сурен Мурадян, фольклорный жанр, загадка, считалочка, детский писатель, воспитательная ценность, познавательная роль, ребенок, воображение.

В данной статье представлены жанры народного фольклора, включенные в детскую поэзию известного поэта, драматурга, детского писателя Сурена Мурадяна.

Посредством фольклорных жанров, используемых С. Мурадяном в детской литературе, автор развивает мысль читателя, формирует его знание, воображение и логику. Фольклерные жанры представляют также большую воспитательную и познавательную ценность, развивают у читателя любознательность и способность быстро ориентироваться. Фольклорные жанры, привнесенные С. Мурадяном в детскую литературу, являются ценными материалами, которые полезны и поучительны для детей и родителей.

SUMMARY

Samples of folklore in children's literature by Suren Muradyan

Anahit Hayriyan

Key words: Suren Muradyan, folklore genre, riddle, counting-out rhyme, children's writer, educational value, cognitive role, child, imagination.

This article presents the genres of folklore included in the children's poetry of the famous poet, playwright, children's writer Suren Muradyan.

by means of folklore genres used in his children's literature, S.Muradyan develops the reader's thought, forms his knowledge, imagination and logic. Folklore genres are also of great educational and cognitive value, they develop the reader's curiosity and ability to quickly navigate. Folklore genres introduced by S. Muradyan in children's literature are valuable materials that are useful and instructive for children and parents.